

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետում «հանձնաժողովների,» բառը փոխարինել «ժամանակավոր հանձնաժողովների, ինչպես նաև» բառերով:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածում՝

- 1) 1-ին մասի «օրենքով սահմանված կարգով» բառերը հանել,
- 2) 1-ին մասի «ա» կետը «նիստերին» բառից հետո լրացնել «, ինչպես նաև այն հանձնաժողովների, ենթահանձնաժողովների և աշխատանքային խմբերի նիստերին, որոնց կազմում նա ընդգրկված է» բառերով,
- 3) 1-ին մասը «ա» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «ա.1», «ա.2» և «ա.3» կետերով՝

«ա.1) ընդգրկվել մշտական հանձնաժողովի կազմում, բացառությամբ սույն օրենքի 25-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված դեպքերի.

ա.2) մասնակցել Ազգային ժողովի այն հանձնաժողովների կազմակերպած խորհրդարանական լուսններին, որոնց կազմում նա ընդգրկված է.

ա.3) պահպանել պատգամավորի էթիկայի կանոնները.»,

4) 1-ին մասի «դ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«դ) սույն օրենքի 6.2-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքում հանդես գալ շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ:»,

5) 1.1-րդ մասում «կամ նրա մշտական հանձնաժողովի նիստերից» բառերը փոխարինել «սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում նշված նիստերից, ինչպես նաև սույն հոդվածի 1-ին կետի «ա.2» ենթակետում նշված խորհրդարանական լսումներից» բառերով:

Հոդված 3. Օրենքը 6-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ և 6.2-րդ հոդվածներով՝

«Հոդված 6.1. Պատգամավորի էթիկայի կանոնները

1. Սույն հոդվածի պահանջները վերաբերում են ինչպես պատգամավորի լիազորությունների իրականացմանը, այնպես էլ՝ նրա ամենօրյա վարքագծին:

2. Պատգամավորի էթիկայի կանոններն են՝

ա) հարգել օրենքը և ենթարկվել օրենքին.

բ) հարգել հանրության բարոյական նորմերը.

գ) պահպանել Ազգային ժողովի և նրա հանձնաժողովների նիստերի անցկացման կարգը.

դ) իր լիազորություններն իրականացնելիս չառաջնորդվել իր կամ իրեն փոխկապակցված անձանց անձնական շահերով.

ե) չօգտագործել պատգամավորի պաշտոնի հեղինակությունը ի շահ իրեն կամ այլ անձի.

զ) իր գործունեությամբ նպաստել Ազգային ժողովի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը.

է) ամենուր և ցանկացած գործունեությամբ զբաղվելիս դրսևորել պատգամավորին վայել վարքագիծ.

ը) հարգալից վերաբերմունք ցուցաբերել քաղաքական ընդդիմախոսների, Ազգային ժողովում հարցերի քննարկման մասնակիցների, ինչպես նաև բոլոր այն անձանց նկատմամբ, որոնց հետ պատգամավորը շփվում է իր լիազորություններն իրականացնելիս:

Հոդված 6.2. Պատգամավորի շահերի բախումը

1. Պատգամավորի կողմից իր կամ իրեն փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալը կամ Ազգային ժողովի քննարկմանը որոշման նախագիծ ներկայացնելը, *Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված հարցի վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը*, ինչպես նաև Ազգային ժողովի, նրա հանձնաժողովների, ենթահանձնաժողովների նիստերում ելույթ ունենալը կամ քվերակությանը մասնակցելը, որը թեև ինքնին օրինական է, սակայն պատգամավորը տեղյակ է, որ այն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև՝

ա) իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

բ) իր կամ իր հետ փոխկապակցված անձի անդամակցած ոչ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

գ) իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

դ) իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակմանը:

2. Սույն օրենքի իմաստով պատգամավորի հետ փոխկապակցված անձինք են համարվում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի համաձայն բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձինք:

3. Ազգային ժողովի, նրա հանձնաժողովների, ենթահանձնաժողովների նիստերում շահերի բախում առաջանալու դեպքում պատգամավորը պարտավոր է համապատասխան նիստում իր ելույթից կամ քվեարկությունից առաջ հանդես գալ շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ, իսկ օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալիս, Ազգային ժողովի քննարկմանը որոշման նախագիծ ներկայացնելիս կամ Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված հարցի վերաբերյալ առաջարկություն ներկայացնելիս՝ համապատասխան փաստաթղթերի հետ միասին ներկայացնել շահերի բախման վերաբերյալ իր գրավոր հայտարարությունը՝ ներկայացնելով շահերի բնույթը:

Պատգամավորն Ազգային ժողովի նիստում շահերի բախման վերաբերյալ իր հայտարարությամբ հանդես է գալիս սույն օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված կարգով: Այդ դեպքում պատգամավորը կարող է նաև հայտարարել, որ հրաժարվում է մասնակցել

հարցի քվեարկությանը, որից նրա բացակայությունը սույն օրենքի 99-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով նախատեսված հիմքով համարվում է հարգելի:

4. Սույն հոդվածի 1-ին կետով սահմանված դրույթները մեկնաբանելիս համարվում է, որ պատգամավորը չի առաջնորդվում իր կամ իրեն փոխկապակցված անձի անձնական շահերով, եթե նա *հանդես է գալիս* Ազգային ժողովի հանձնաժողովի, խմբակցության կամ պատգամավորական խմբի անունից կամ տվյալ գործողությունը՝

ա) վերաբերվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների, հիմնարկների, կամ դրանց պաշտոնատար անձանց գործունեությանը.

բ) ունի համընդհանուր կիրառելիություն և անդրադառնում է հասարակության լայն շերտերի վրա, այնպես, որ ողջամտորեն չի կարող մեկնաբանվել որպես պատգամավորի կամ նրա հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել.

գ) վերաբերվում է պատգամավորի օրենքով նախատեսված վարձատրությանը, պատգամավորական գործունեության հետ կապված ծախսերի փոխհատուցմանը կամ արտոնություններին:»:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Պատգամավորի հիմնական աշխատանքային ժամանակը ներառում է Ազգային ժողովի, նրա հանձնաժողովների, ենթահանձնաժողովների, աշխատանքային խմբերի նիստերի և

խորհրդարանական լսումների անցկացման, ինչպես նաև պատգամավորի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ այլ ժամանակահատվածը: Հիմնական աշխատանքային ժամանակը նորմավորված չէ:»,

2) 7-րդ մասն ուժը կորցրած ճանաչել,

3) 9-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքը 9-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1-րդ և 9.2-րդ հոդվածներով՝

«Հոդված 9.1. Պատգամավորի գործունեության սահմանափակումները

1. Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասին համապատասխան՝ պատգամավորը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

2. Սույն օրենքի իմաստով ձեռնարկատիրական գործունեություն, ինչպես նաև գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանք են համարվում «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածով սահմանված համապատասխան գործունեությունը (աշխատանքը):

3. Պատգամավորական լիազորությունների իրականացման հետ կապված պատգամավորի պարտականությունները գերակա են նրա կողմից իրականացվող գիտական, մանկավարժական, ստեղծագործական

աշխատանքի կամ օրենքով չարգելված այլ աշխատանքային գործունեության նկատմամբ:

4. Պատգամավորին գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքի համար վճարումը չի կարող գերազանցել ողջամիտ չափը, այսինքն՝ այն չափը, որին նույնպիսի գործունեության համար համանման որակներ ունեցող, բայց պատգամավոր չհանդիսացող անձը կարող էր հավակնել:

5. Պատգամավորական լիազորությունների իրականացումից բացի՝ գիտական, մանկավարժական, ստեղծագործական կամ օրենքով չարգելված այլ աշխատանք կատարելը հիմք չէ մեկ հերթական նստաշրջանի ընթացքում քվեարկությունների ավելի քան կեսից պատգամավորի բացակայելը, սույն օրենքի 99-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետով սահմանված կարգով հարգելի համարելու համար:

Հոդված 9.2. Պատգամավորի գործունեության սահմանափակումների

ապահովումը

1. Պատգամավոր ընտրվելու մասին համապատասխան ընտրական հանձնաժողովի որոշման ընդունումից հետո՝ մեկ ամսվա ընթացքում պատգամավորը պարտավոր է՝

ա) դուրս գալ անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառումից,

բ) դուրս գալ առևտրային կազմակերպությունից կամ *դրա կանոնադրական կապիտալում* իր բաժնեմասն ամբողջությամբ հանձնել հավատարմագրային կառավարման,

գ) հրաժարվել առևտրային կազմակերպությունում ուրիշի գույքի հավատարմագրային կառավարումից,

դ) ազատվել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում զբաղեցրած պաշտոններից,

ե) ազատվել վճարովի հիմունքներով աշխատանքից, եթե դա «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի համաձայն չի համարվում գիտական, մանկավարժական կամ ստեղծագործական աշխատանք:

2. Սույն հոդվածի 1-ին կետով սահմանված ժամկետի ընթացքը կասեցվում է պատգամավորի ընտրության (համամասնական և մեծամասնական ընտրակարգով) արդյունքներով որոշումների վիճարկման մասին գործը սահմանադրական դատարանում քննության ընդունվելու օրվանից մինչև այդ գործով սահմանադրական դատարանի վերջնական որոշման ընդունման օրը:

3. Պատգամավորն իրավունք ունի մինչև վճարովի հիմունքներով գիտական, մանկավարժական կամ ստեղծագործական աշխատանքի անցնելը սույն օրենքի 24.2-րդ հոդվածի 1-ին կետի «դ» ենթակետով սահմանված կարգով դիմել Ազգային ժողովի Էթիկայի հարցերով ժամանակավոր հանձնաժողովին (այսուհետ՝ Էթիկայի հանձնաժողով) և ստանալ նրա եզրակացությունը:

4. Եթե առևտրային *կազմակերպության կանոնադրական կապիտալում* պատգամավորի մասնաբաժնի հավատարմագրային կառավարման պայմանագիրը չի դադարել այդ կազմակերպության լուծարման կամ սնանկ ճանաչվելու հիմքով, ապա պատգամավորը պարտավոր է հավատարմագրային կառավարման պայմանագիրը դադարելուց հետո՝ մեկ

ամսվա ընթացքում դուրս գալ առևտրային կազմակերպությունից կամ *դրա կանոնադրական կապիտալում* իր բաժնեմասն ամբողջությամբ հանձնել հավատարմագրային կառավարման:»:

Հոդված 6. Օրենքի 12-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «գ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«գ) սույն օրենքի 99¹-րդ հոդվածի համաձայն նա խախտել է Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի պայմանները,

2) 1-ին մասը «գ» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ.1» կետով՝

«գ.1) նա պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնում կամ առևտրային կազմակերպությունում նշանակվել է (ընտրվել է) պաշտոնում.»,

3) 1-ին մասի «ժ» կետն ուժը կորցրած ճանաչել,

4) 2-րդ մասում «գ» բառը փոխարինել «գ.1» *բառով*, իսկ « , «ը» և «ժ»» բառերը «և «ը»» բառերով:

Հոդված 7. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետում «կազմը» բառը փոխարինել «, ինչպես նաև Էթիկայի հանձնաժողովի կազմերը, նշանակում է Էթիկայի հանձնաժողովի նախագահին և նրա տեղակալին» բառերով:

Հոդված 8. Օրենքի 21-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Մշտական հանձնաժողովների թիվը, անվանումները և գործունեության ոլորտները սահմանվում են Ազգային ժողովի որոշմամբ: Մշտական հանձնաժողովների թիվը սահմանվում է Ազգային ժողովի առաջին նստաշրջանում:»

2) 7-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-րդ մասով՝

«7.1. Սույն հոդվածի 4-րդ կետով նախատեսված դեպքում վերակազմակերպված (միաձուլված, միացված, բաժանված) և (կամ) անվանափոխված մշտական հանձնաժողովների փորձագետների (մասնագետների) իրավական վիճակը որոշվում է «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածով սահմանված կարգով:»:

Հոդված 9. Օրենքը 24-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 24.1-րդ, 24.2-րդ, 24.3-րդ, 24.4-րդ և 24.5-րդ հոդվածներով՝

«Հոդված 24.1. Էթիկայի հանձնաժողովի կազմավորումը

1. Ազգային ժողովի առաջին նստաշրջանում, ինչպես նաև յուրաքանչյուր հերթական նստաշրջանի առաջին չորսօրյա նիստում խմբակցությունների ներկայացմամբ կազմավորվում է Էթիկայի հանձնաժողով, որը գործում է մինչև նույն գումարման Ազգային ժողովի հաջորդ Էթիկայի հանձնաժողովի կազմավորումը:

Էթիկայի հանձնաժողովի կազմը հաստատում է, ինչպես նաև Էթիկայի հանձնաժողովի նախագահին և նրա տեղակալին նշանակում է Ազգային ժողովի նախագահը, եթե պահպանված են սույն հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 6-րդ կետերով սահմանված սկզբունքները:

2. Խմբակցությունը Էթիկայի հանձնաժողովում ունի առնվազն մեկ պատգամավոր ներկայացնելու իրավունք: Եթե ոչ ընդդիմադիր խմբակցությունների ընդհանուր թիվը հավասար չէ ընդդիմադիր

խմբակցությունների ընդհանուր թվին, ապա Էթիկայի հանձնաժողովի կազմը համալրվում է լրացուցիչ անդամով (ներով), հետևյալ կարգով՝

ա) եթե ոչ ընդդիմադիր խմբակցությունների ընդհանուր թիվը մեծ է ընդդիմադիր խմբակցությունների ընդհանուր թվից, ապա դրանց տարբերությունը կազմող տեղում (տեղերում) մեկական լրացուցիչ անդամ հաջորդաբար առաջադրելու իրավունքը պատկանում է ընդդիմադիր խմբակցություններին.

բ) եթե ընդդիմադիր խմբակցությունների ընդհանուր թիվը մեծ է ոչ ընդդիմադիր խմբակցությունների ընդհանուր թվից, ապա դրանց տարբերությունը կազմող տեղում (տեղերում) մեկական լրացուցիչ անդամ հաջորդաբար առաջադրելու իրավունքը պատկանում է ոչ ընդդիմադիր խմբակցություններին.

գ) լրացուցիչ անդամի (ների) առաջադրման հաջորդականությունը որոշվում է ըստ նրա (նրանց) առաջադրման իրավունքն ունեցող խմբակցությունների թվականակի՝ մեծաթվից փոքրաթիվ.

դ) լրացուցիչ անդամ (ները) առաջադրվում են մինչև Էթիկայի հանձնաժողովում ոչ ընդդիմադիր և ընդդիմադիր խմբակցությունների ներկայացուցիչների թվի հավասարվելը:

3. Էթիկայի հանձնաժողովի նախագահը և նրա տեղակալը նշանակվում են Էթիկայի հանձնաժողովի անդամների թվից՝ խմբակցությունների ներկայացմամբ:

Էթիկայի հանձնաժողովի նախագահի պաշտոնը հաջորդաբար զբաղեցնելու իրավունքը պատկանում է ամենամեծաթիվ ընդդիմադիր և ոչ ընդդիմադիր խմբակցություններին:

Եթե Էթիկայի հանձնաժողովի նախագահի պաշտոնը զբաղեցնում է՝

ա) ոչ ընդդիմադիր խմբակցության ներկայացուցիչը, ապա Էթիկայի հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնը զբաղեցնելու իրավունքը պատկանում է ամենամեծաթիվ ընդդիմադիր խմբակցությանը.

բ) ընդդիմադիր խմբակցության ներկայացուցիչը, ապա Էթիկայի հանձնաժողովի նախագահի տեղակալի պաշտոնը զբաղեցնելու իրավունքը պատկանում է ամենամեծաթիվ ոչ ընդդիմադիր խմբակցությանը:

4. Էթիկայի հանձնաժողովի անդամների առաջադրման, ինչպես նաև Էթիկայի հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի պաշտոնը զբաղեցնելու իրավունքը պահպանվում է մինչև Էթիկայի հանձնաժողովի լիազորությունների ավարտը:

Խմբակցություններն իրավունք ունեն փոխելու Էթիկայի հանձնաժողովում ընդգրկված իրենց անդամներին:

5. Էթիկայի հանձնաժողովի անդամի (նախագահի, նրա տեղակալի) լիազորությունները դադարում են, եթե՝

ա) սույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանված դեպքերում դադարել են նրա պատգամավորական լիազորությունները.

բ) Էթիկայի հանձնաժողովի լիազորություններն ավարտվել են.

գ) նա տվել է հրաժարական.

դ) սույն հոդվածի 4-րդ կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված կարգով խմբակցությունը նրան փոխել է:

6. Էթիկայի հանձնաժողովի անդամի (նախագահի, նրա տեղակալի) թափուր տեղը (պաշտոնը) լրացվում է սույն հոդվածի 1-ից 4-րդ կետերով

սահմանված կարգով՝ Էթիկայի հանձնաժողովի անդամ առաջադրելու կամ Էթիկայի հանձնաժողովի նախագահի, նրա տեղակալի պաշտոնը զբաղեցնելու իրավունքն ունեցող խմբակցության կողմից:

Հոդված 24.2. Էթիկայի հանձնաժողովի իրավասությունը

1. Էթիկայի հանձնաժողովը՝

ա) Ազգային ժողովին եզրակացություն է ներկայացնում պատգամավորի կողմից Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի պայմանները խախտելու վերաբերյալ.

բ) որոշում է կայացնում պատգամավորի կողմից սույն օրենքի 6.1-րդ հոդվածի 2-րդ կետերով նախատեսված էթիկայի կանոնները խախտելու վերաբերյալ.

գ) որոշում է կայացնում պատգամավորի կողմից շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու սույն օրենքի 6.2-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված պահանջը չկատարելու վերաբերյալ.

դ) պատգամավորին եզրակացություն է ներկայացնում նրա կողմից նշված աշխատանքը «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի համաձայն գիտական, մանկավարժական կամ ստեղծագործական աշխատանք համարելու վերաբերյալ.

ե) պատգամավորին եզրակացություն է ներկայացնում նրա կողմից նշված հարցով սույն օրենքի 6.2-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու անհրաժեշտության վերաբերյալ:

2. Էթիկայի հանձնաժողովը կարող է՝

ա) ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կամ համայնքային հիմնարկից, *պետական կամ համայնքային կազմակերպությունից* կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջել և ստանալ Էթիկայի հանձնաժողովում քննարկվող հարցին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր.

բ) իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից, պետական կամ համայնքային հիմնարկից, *պետական կամ համայնքային կազմակերպությունից* կամ դրանց պաշտոնատար անձանցից, բացառությամբ՝ դատարանների, դատավորների և դատախազների, պահանջել Էթիկայի հանձնաժողովում քննարկվող հարցի ուսումնասիրության ընթացքում բացահայտման ենթակա հանգամանքների վերաբերյալ անցկացնել ստուգումներ, ուսումնասիրություններ, փորձագիտական հետազոտություններ և ներկայացնել դրանց արդյունքները:

3. Էթիկայի հանձնաժողովի պահանջած նյութերը, փաստաթղթերը կամ այլ տեղեկությունները պետք է նրան ուղարկվեն հարցումը ստանալուց հետո՝ 10 օրվա ընթացքում, եթե հարցման մեջ այլ ժամկետ նշված չէ կամ հարցման հասցեատերը Էթիկայի հանձնաժողովի պահանջը կատարելու համար այլ ողջամիտ ժամկետ չի առաջարկում:

4. Էթիկայի հանձնաժողովի անդամներն իրավասու են անարգել այցելել ցանկացած պետական կամ համայնքային հիմնարկ կամ կազմակերպություն, ինչպես նաև ծանոթանալ Էթիկայի հանձնաժողովում քննարկվող հարցին առնչվող ցանկացած նյութի և փաստաթղթի: Պետական, ծառայողական, առևտրային կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք

պարունակող տեղեկություններին Էթիկայի հանձնաժողովի անդամները կարող են ծանոթանալ օրենքով սահմանված կարգով:

Հոդված 24.3. Էթիկայի հանձնաժողովի դիմելը և դիմումի քննարկումը

1. Էթիկայի հանձնաժողովին կարող են դիմել՝

ա) յուրաքանչյուր ոք՝ սույն օրենքի 24.2-րդ հոդվածի 1-ին կետի «ա»-ից «գ» ենթակետերով նախատեսված դեպքերում .

բ) պատգամավորը՝ սույն օրենքի 24.2-րդ հոդվածի 1-ին կետի «դ» և «ե» ենթակետերով նախատեսված դեպքերում:

2. Դիմումը ներկայացվում է գրավոր և պետք է պարունակի՝

ա) դիմողի անունը, ազգանունը, պատգամավորի դեպքում՝ նաև ընտրատարածքի համարը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը.

բ) դիմողի հասցեն, իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու վայրը (պատգամավորի դեպքում չի ներկայացվում).

գ) սույն օրենքի 24.2-րդ հոդվածի 1-ին կետի «ա»-ից «գ» ենթակետերով նախատեսված դեպքերում այն պատգամավորի անունը, ազգանունը և ընտրատարածքի համարը, ում վերաբերվում է դիմումը.

դ) Սահմանադրության, սույն օրենքի պահանջների խախտումը հավաստող, ինչպես նաև հարցի պարզաբանման կամ լուծման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր.

ե) դիմումը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը.

զ) դիմողի, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը:

Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր:

3. Եթե դիմումում առկա են ձևական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա Էթիկայի հանձնաժողովի քարտուղարը դրանք մատնացույց է անում դիմողին՝ նրան հնարավորություն ընձեռելով շտկելու այդ սխալները, կամ ինքն է շտկում դրանք՝ նախապես կամ հետագայում դիմողին իրազեկելով այդ մասին: Եթե դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա Էթիկայի հանձնաժողովի քարտուղարն առաջարկում է սահմանված ժամկետում համալրել այդ ցանկը:

4. Էթիկայի հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ, սակայն ոչ ուշ, քան դիմումը ստանալուց հետո՝ 10-օրյա ժամկետում, Էթիկայի հանձնաժողովն իր որոշմամբ սկսում է դիմումում բարձրացված հարցի քննությունը կամ մերժում է դիմումի քննարկումը:

5. Էթիկայի հանձնաժողովը մերժում է դիմումի քննարկումը, եթե՝

ա) դիմում առաջադրված հարցերը ենթակա չեն Էթիկայի հանձնաժողովին.

բ) դիմողն իրավասու չէ դիմումում առաջադրված հարցով դիմելու Էթիկայի հանձնաժողով.

գ) նույն պատգամավորի և նույն հիմքով ներկայացված դիմումի վերաբերյալ առկա է Ազգային ժողովի և (կամ) Էթիկայի հանձնաժողովի որոշում (եզրակացություն).

դ) դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի (դիմումների) հիման վրա Էթիկայի հանձնաժողովում իրականացվում է հարցի քննություն:

6. Էթիկայի հանձնաժողովում հարցի քննությունը սկսելուց հետո՝ 3-օրյա ժամկետում, Էթիկայի հանձնաժողովի քարտուղարը դիմողին, ինչպես նաև դիմումում նշված պատգամավորին և այլ շահագրգիռ անձանց ծանուցում է հարցի քննությունը սկսելու վերաբերյալ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև հարցի քննությանը ներգրավված իրավասու մարմինների ներկայացուցիչներին ծանուցում է հարցի քննության իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին:

Էթիկայի հանձնաժողովի քարտուղարը դիմումը և դրան կից փաստաթղթերը, մերժման մասին Էթիկայի հանձնաժողովի որոշման կայացման օրվանից հետո՝ 3-օրյա ժամկետում, վերադարձնում է դիմողին:

7. Էթիկայի հանձնաժողովը հարցի քննությունն ավարտում է հարցի քննությունը սկսելու վերաբերյալ իր որոշման կայացման օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում: Այդ ժամկետը կարող է Էթիկայի հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել մինչև 20 օրով, եթե հարցի քննության համար էական համարվող հանգամանքներ պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր ձեռք բերել և հարցի քննության մնացած ժամկետում հնարավոր չէ ըստ էության որոշում կամ եզրակացություն ընդունել: Հարցի քննության ժամկետի երկարաձգման մասին Էթիկայի հանձնաժողովի քարտուղարը ծանուցում է շահագրգիռ կողմերին:

8. Էթիկայի հանձնաժողովը պարտավոր է կասեցնել հարցի քննությունը, եթե՝

ա) անհնարին է տվյալ հարցի վերաբերյալ Էթիկայի հանձնաժողովի որոշման կամ եզրակացության ընդունումը մինչև սահմանադրական,

վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը.

բ) Էթիկայի հանձնաժողովի ուսումնասիրության ընթացքում ի հայտ են գալիս *հանցագործության* հատկանիշներ: Այդ դեպքում Էթիկայի հանձնաժողովի քարտուղարը 24 ժամվա ընթացքում հարցին առնչվող բոլոր նյութերն ուղարկում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին (այսուհետ՝ Գլխավոր դատախազ):

Էթիկայի հանձնաժողովը կարող է կասեցնել հարցի քննությունը, եթե դիմումում նշված պատգամավորը հարգելի պատճառներով բացակայում է, և Էթիկայի հանձնաժողովը, նախքան որոշում կամ եզրակացություն ընդունելը, անհրաժեշտ է համարում նրա ներկայությունը՝ հարցի քննությանն առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար:

Հարցի քննությունը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

9. Հարցի քննությունը կարճվում է, եթե Ազգային ժողովի լիազորություններն ավարտվել են, դիմումում նշված պատգամավորի լիազորությունները դադարել են կամ օրենքով նախատեսված այլ հիմքով Էթիկայի հանձնաժողովի եզրակացության ընդունման անհրաժեշտությունը վերացել է:

10. Էթիկայի հանձնաժողովի քարտուղարը հարցի քննությունը կարճելու, կասեցնելու և վերսկսելու վերաբերյալ Էթիկայի հանձնաժողովի որոշումները 3-օրյա ժամկետում ուղարկում է շահագրգիռ կողմերին:

Հոդված 24.4. Էթիկայի հանձնաժողովի գործունեության կարգը

1. Էթիկայի հանձնաժողովը գործում է սույն օրենքի 27-րդ, 28-րդ, 29-րդ և 30.1 -րդ հոդվածներով նախատեսված կարգով հետևյալ տարբերությամբ՝

ա) հանձնաժողովի հերթական նիստերը գումարվում են միայն հանձնաժողովի կամ նրա նախագահի սահմանած օրերին.

բ) հանձնաժողովի նիստերը դռնփակ են, բացառությամբ այն դեպքի, երբ դիմումում նշված պատգամավորն առաջարկում է հանձնաժողովի նիստերն անցկացնել դռնբաց.

գ) հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է (գրանցվել է) հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը և այն վարում է հանձնաժողովի նախագահը կամ սույն օրենքի 26-րդ հոդվածի 9-րդ կետով նախատեսված դեպքում՝ նրա տեղակալը կամ հանձնաժողովի որոշմամբ լիազորված հանձնաժողովի անդամը.

դ) սույն օրենքի 24.2-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով նախատեսված դեպքերում որպես հիմնական զեկուցող հանդես է գալիս դիմումի ուսումնասիրության արդյունքները հանձնաժողովին ներկայացնելու իրավասություն ունեցող հանձնաժողովի անդամը, իսկ հարակից զեկուցմամբ՝ դիմումում նշված պատգամավորը: Դիմումի հեղինակը, ինչպես նաև սույն օրենքի 24.2-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով հանձնաժողովին նյութեր, փաստաթղթեր կամ տեղեկություններ ներկայացրած անձինք, *ինչպես նաև պատգամավորի ներկայացուցիչը* իրավունք ունեն ելույթ ունենալ, պատասխանել հանձնաժողովի անդամների և դիմումում նշված պատգամավորի հարցերին.

ե) սույն օրենքի 24.2-րդ հոդվածի 1-ին կետի «դ» և «ե» ենթակետերով նախատեսված դեպքերում որպես հիմնական զեկուցող հանդես է գալիս դիմումի հեղինակը, իսկ հարակից զեկուցմամբ՝ դիմումի ուսումնասիրության

արդյունքները հանձնաժողովին ներկայացնելու իրավասություն ունեցող հանձնաժողովի անդամը: Սույն օրենքի 24.2-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով հանձնաժողովին նյութեր, փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ ներկայացրած անձինք, *ինչպես նաև պատգամավորի ներկայացուցիչը* իրավունք ունեն ելույթ ունենալ, պատասխանել հանձնաժողովի անդամների և դիմումի հեղինակի հարցերին:

զ) հանձնաժողովի որոշումները և եզրակացություններն ընդունվում են քվեարկությանը մասնակցած հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

է) եթե հանձնաժողովի որոշման կամ եզրակացության նախագիծը քվեարկության արդյունքում չի ստանում ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա սույն օրենքի 24.2-րդ հոդվածի 1-ին կետի «ա», «բ» և «գ» ենթակետերով նախատեսված հարցերով ներկայացված դիմումը համարվում է մերժված, իսկ սույն օրենքի 24.2-րդ հոդվածի 1-ին կետի «դ» և «ե» ենթակետերով նախատեսված հարցերով ներկայացված դիմումի քննարկումը համարվում է ավարտված:

ը) հանձնաժողովը պարտավոր է հնարավորություն տալ այն պատգամավորին, որին վերբերվում է դիմումը պարզաբանումներ տալ դիմումում բարձրացված հարցերի և կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև հիմնավորել իր դիրքորոշումն ամբողջությամբ: Եթե դիմումում նշված պատգամավորը հրաժարվել է մասնակցել հարցի քննարկմանը, ապա այդ հարցով Էթիկայի հանձնաժողովի ըստ էության որոշման կամ եզրակացության քննարկման օրվանից առնվազն 10 օր առաջ՝ Էթիկայի հանձնաժողովի քարտուղարը հարցին առնչվող

նյութերն ուղարկում է պատգամավորին, որն իրավունք ունի նյութերը ստանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում, եթե Էթիկայի հանձնաժողովի որոշմամբ այլ ժամկետ սահմանված չէ, Էթիկայի հանձնաժողովին ուղարկել դրանց վերաբերյալ իր դիրքորոշումն ու պարզաբանումները.

թ) հանձնաժողովի ընթացակարգային որոշումները պետք է լինեն գրավոր, իսկ ըստ էության որոշումները և եզրակացությունները՝ նաև պատճառաբանված, բացառությամբ սույն կետի «է» ենթակետով նախատեսված դեպքերի.

ժ) մինչև հանձնաժողովում քննարկվող դիմումի վերաբերյալ վերջնական որոշման կամ եզրակացության ընդունումը, դիմումի բովանդակությունը հրապարակման ենթակա չէ, բացառությամբ սույն կետի «բ» ենթակետով նախատեսված դեպքի.

ժա) հանձնաժողովի անդամները և հանձնաժողովի աշխատանքներին մասնացող այլ անձինք իրավունք չունեն հարցի քննարկման կամ ուսումնասիրման ընթացքում իրենց հայտնի դարձած դիմողի կամ այլ անձանց մասին տվյալներ հրապարակել՝ առանց նրանց գրավոր համաձայնության.

ժբ) պատգամավորը չի կարող հանձնաժողովի անդամի կարգավիճակով մասնակցել հանձնաժողովում հարցի քննարկմանը, եթե նա կամ նրան փոխկապակցված անձը դիմումի հեղինակն է կամ հանձնաժողովը քննում է նրանց հարցը:

2. Էթիկայի հանձնաժողովն ունի իր կանոնակարգը, որն հաստատվում է հանձնաժողովի որոշմամբ:

3. Էթիկայի հանձնաժողովի նախագահը Էթիկայի հանձնաժողովի որոշումները և եզրակացությունները հրապարակում է Ազգային ժողովի հերթական նստաշրջանի առաջիկա չորսօրյա նիստերում, որից հետո դրանք տեղադրվում են Ազգային ժողովի ինտերնետային կայքում:

Բացառությամբ սույն օրենքի 99.1-րդ հոդվածով նախատեսված դեպքի Էթիկայի հանձնաժողովի որոշումները և եզրակացություններն Ազգային ժողովում չեն քննարկվում:

4. Սույն օրենքի 22-րդ *հոդվածի 2-ից 5-րդ կետերը* Էթիկայի հանձնաժողովի գործունեության վրա *չեն* տարածվում:

Հոդված 24.5. Էթիկայի հանձնաժողովի գործունեության ապահովումը

1. Էթիկայի հանձնաժողովի կազմակերպչական, իրավաբանական, փաստաթղթային, տեղեկատվական և վերլուծական գործունեությունն ապահովում է Էթիկայի հանձնաժողովի քարտուղարությունը, որը Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է, ունի Աշխատակազմի հաստիքացուցակով սահմանված քարտուղար և գործավար (օգնական):

2. Էթիկայի հանձնաժողովի քարտուղարը և գործավարը (օգնականը) աշխատանքի են ընդունվում և ազատվում աշխատանքից Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին օրենսդրությանը համապատասխան:

3. Էթիկայի հանձնաժողովի քարտուղարը կատարում է Էթիկայի հանձնաժողովի նախագահի հանձնարարականները և իրականացնում է սույն օրենքով նախատեսված այլ լիազորություններ:»:

Հոդված 10. Օրենքի 25-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «1/12-ին» բառը փոխարինել «1/ՄՀ-ին, որտեղ ՄՀ-ն մշտական հանձնաժողովների ընդհանուր թիվն է» բառերով,

2) 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7. Ազգային ժողովի նախագահը և նրա տեղակալները, ինչպես նաև խմբակցությունների և պատգամավորական խմբերի ղեկավարները կարող են իրենց ցանկությամբ չընդգրկվել մշտական հանձնաժողովների կազմում:»:

Հոդված 11. Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասում «սույն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ կետի «բ», «դ», «ը» և «թ» ենթակետերով սահմանված հանձնաժողովների նիստերը՝ ժամը 11-ին, իսկ սույն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ կետի «ա», «գ», «ե», «զ», «է», «ժ», «ա» և «ժբ» ենթակետերով սահմանված հանձնաժողովների նիստերը՝ ժամը 13-ին» բառերը փոխարինել «ժամը 11-ին» բառերով:

Հոդված 12. Օրենքի 30-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասում «օրակարգերի նախագծերում օրենքի» բառերը փոխարինել «օրակարգի նախագծում օրենքի, օրենքների նախագծերի փաթեթի» բառերով.

2) 4-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով՝

«5. Եթե Ազգային ժողովի հերթական նստաշրջանի կամ չորսօրյա նիստերի օրակարգի նախագծում հարցի ընդգրկվելը գլխադասային հանձնաժողովի եզրակացությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ հետաձգվել է, ապա այդ հարցը՝

ա) գլխադասային հանձնաժողովի օրակարգ է ընդգրկվում հեղինակի (հիմնական զեկուցողի) գրավոր դիմումով.

բ) հետաձգման ժամկետը լրանալու օրվան հաջորդող օրը դուրս է գալիս Ազգային ժողովում շրջանառությունից, եթե մինչև հետաձգման ժամկետը լրանալու օրը հեղինակը գրավոր չի դիմում գլխադասային հանձնաժողով:»:

Հոդված 13. Օրենքի 34-րդ հոդվածում՝

1) 6-րդ մասը «գ» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ.1» կետով՝

«գ.1) Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների թվի, անվանումների և գործունեության ոլորտների հաստատում.»,

2) 6-րդ մասի «ե» կետն ուժը կորցրած ճանաչել,

3) 7-րդ մասում «ե» բառը փոխարինել «դ» բառով,

4) 7-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-րդ մասով՝

«7.1. Ազգային ժողովի առաջին նստաշրջանի գումարման ժամանակահատվածում սույն օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված կարգով կազմավորվում են Ազգային ժողովի մշտական հանձնաժողովները, իսկ սույն օրենքի 24.1-րդ հոդվածով նախատեսված կարգով կազմավորվում է Էթիկայի հանձնաժողով: Հանձնաժողովների կազմավորումն ավարտվելուց հետո Ազգային ժողովի նախագահն Ազգային ժողովի նիստում հանդես է գալիս դրա վերաբերյալ հայտարարությամբ:

Հոդված 14. Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 15. Օրենքի 43-րդ հոդվածի 7-րդ մասում «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը (այսուհետ՝ Գլխավոր դատախազ)» բառերը փոխարինել «Գլխավոր դատախազը» բառերով, իսկ «Հայաստանի

Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ)» բառերը՝ «Կենտրոնական բանկի» բառերով:

Հոդված 16. Օրենքի 51-րդ հոդվածի 6-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 17. Օրենքը 52-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 52.1-րդ հոդվածով.

«Հոդված 52.1. Օրենքների և Ազգային ժողովի որոշումների նախագծերի գրանցումը

1. Սույն օրենքի 51-րդ հոդվածի 1-ին և 52-րդ հոդվածի 3-րդ կետերի համաձայն շրջանառության մեջ դրված օրենքների նախագծերը (նախագծերի փաթեթները) և Ազգային ժողովի որոշման նախագծերը Աշխատակազմի կողմից գրանցվում են Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված հարցերի ռեեստրում (այսուհետ՝ Ռեեստր), որը տեղադրվում է Ազգային ժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

2. Ռեեստրը բաղկացած է հետևյալ բաժիններից՝

ա) հերթական նստաշրջանի օրակարգում դեռևս չընդգրկված հարցեր.

բ) հերթական նստաշրջանի օրակարգում ընդգրկված հարցեր.

գ) ամբողջությամբ ընդունված հարցեր:

3. Ռեեստրում գրանցված նախագծի 1-ին էջի վերևի ձախ անկյունում դրվում է փաստաթղթային կոդ, որը կազմված է միմյանցից գծիկներով բաժանված հետևյալ մասերից՝

ա) ներկայացնողի անվանման հապավումը («Պ»՝ պատգամավորի օրենսդրական նախաձեռնություն, «Կ»՝ Կառավարության օրենսդրական

նախաձեռնություն, «Ն»՝ Հանրապետության Նախագահի կողմից ներկայացված միջազգային պայմանագրեր կամ վերադարձված օրենքներ)։

բ) *Ռեեստրում* հերթական համարը.

գ) շրջանառության մեջ դրվելու օրը, ամիսը և տարին.

դ) գլխադասային հանձնաժողովի անվանման հապավումը.

ե) փաստաթղթի տեսակը ներկայացնող թվերը («010»՝ օրենքի նախագիծ, «011»՝ Ազգային ժողովի որոշման նախագիծ կամ միջազգային պայմանագիր, «012»՝ Ազգային ժողովի հայտարարության նախագիծ, «013»՝ Ազգային ժողովի ուղերձի նախագիծ)։

զ) օրենքի նախագծի քննարկման ընթացքը ներկայացնող թիվը («0»՝ դեռևս չի քննարկվել կամ քննարկվել է, սակայն դեռևս չի քվեարկվել, «1»՝ առաջին ընթերցմամբ ընդունվել է, «2»՝ երկրորդ ընթերցմամբ ընդունվել է, «2ամբ.»՝ երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է, «3»՝ երրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է)։

4. Օրենքների նախագծերի փաթեթի դեպքում առաջադրված օրենքի նախագիծն ունենում է *Ռեեստրում* նախագծերի փաթեթի գրանցման հերթական համարը, իսկ մյուս նախագծերն ունենում են նաև այդ համարին ավելացված լրացուցիչ համարներ։

5. Եթե հեղինակի կողմից ներկայացվում է օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագծի լրամշակված տարբերակ, ապա փաստաթղթային կոդում նշվում է նաև լրամշակված տարբերակը պաշտոնապես ներկայացնելու ամսաթիվը, իսկ *Ռեեստրում* տեղադրվում է լրամշակված նախագծի տեքստը։

6. Եթե օրենքի կամ Ազգային ժողովի որոշման նախագիծը հեղինակների կողմից միացվում է *Ռեեստրում* տեղադրված մեկ այլ նախագծի, ապա միավորված նախագիծը (նախագծերի փաթեթը) ունենում է

Ռեեստրում տեղադրված բոլոր նախագծերի փաստաթղթային կողերը, իսկ Ռեեստրում հրապարակվում է միասնական տեքստը:

7. Ռեեստրի՝ սույն հոդվածի 2-րդ կետի «ա» կամ «բ» ենթակետում նշված բաժնում ընդգրկված նախագծի անվանումը հիշատակելիս (արտահայտելիս, այլ փաստաթղթում նշելիս, հղումներ կատարելիս), այդ թվում՝ նախագծի վերաբերյալ գրավոր եզրակացություններ կամ առաջարկություններ ներկայացնելիս, նախագիծն Ազգային ժողովի օրակարգերի նախագծերում ընդգրկելիս, նախագիծը երկրորդ կամ երրորդ ընթերցմամբ քննարկման ներկայացնելիս, ինչպես նաև առաջին կամ երկրորդ ընթերցմամբ ընդունված նախագիծն իրավասու մարմիններ ուղարկելիս նշվում է նաև փաստաթղթային կողը: Նախագծերի փաթեթի անվանումը հիշատակելիս կարող է նշվել միայն առաջադրված նախագծի փաստաթղթային կողը:»:

Հոդված 18. *Օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասը «համապատասխան» բառից հետո լրացնել «գործունեության ոլորտի» բառերով:*

Հոդված 19. Օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Հերթական նստաշրջանի կամ չորսօրյա նիստերի օրակարգի նախագծում օրենքի, օրենքների նախագծերի փաթեթի կամ Ազգային ժողովի որոշման նախագծի ընդգրկումը կարող է գլխադասային հանձնաժողովի եզրակացությամբ՝ Ազգային ժողովի որոշմամբ հետաձգվել մեկ անգամ՝ մինչև մեկ տարի ժամկետով:»:

Հոդված 20. Օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «զ» և «է» կետերով՝

«գ) սույն օրենքի 6.2-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքում հանդես գալ շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ.

է) հանդես գալ հարցի քվեարկությանը մասնակցելուց հրաժարվելու մասին հայտարարությամբ:»:

Հոդված 21. Օրենքի 79-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության «հարցերի» բառը փոխարինել «ոլորտի» բառով:

Հոդված 22. Օրենքի 80-րդ հոդվածի 2-րդ մասում երկրորդ պարբերության «հարցերի» բառը փոխարինել «ոլորտների» բառով:

Հոդված 23. Օրենքի 81-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) «բ» կետում «, բյուջեպային և տնտեսական հարցերի» բառերը փոխարինել «և բյուջեպային ոլորտի» բառով,

2) «գ» կետը «գործերի» բառից հետո լրացնել «ոլորտի» բառով:

Հոդված 24. Օրենքի 87-րդ հոդվածի 4-րդ մասում «հարցերի» բառը փոխարինել «ոլորտի» բառով:

Հոդված 25. Օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասում «, բյուջեպային և տնտեսական հարցերի» բառերը փոխարինել «և բյուջեպային ոլորտների» բառերով:

Հոդված 26. Օրենքի 89-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) «գ» կետում «հարցերի» բառը փոխարինել «ոլորտի» բառով:

2) «դ» կետը «գործերի» բառից հետո լրացնել «ոլորտի» բառով:

Հոդված 27. Օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերում «հարցերի» բառը փոխարինել «ոլորտի» բառով:

Հոդված 28. Օրենքի 97-րդ հոդվածի 8-րդ մասից «հրաժարականն ընդունելու և նրա» բառերը հանել:

Հոդված 29. Օրենքի 99-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետում «քվեարկությունից առաջ Ազգային ժողովի նիստում» բառերը փոխարինել

«սույն օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ կետի «է» ենթակետով սահմանված կարգով» բառերով:

Հոդված 30. Օրենքը 99-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 99.1-րդ հոդվածով՝

«Հոդված 99¹. Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի պայմանները խախտելու դեպքում պատգամավորի լիազորությունների դադարման կարգը

1. Եթե սույն օրենքի 24.2-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով նախատեսված հարցի քննարկման արդյունքում Էթիկայի հանձնաժողովն ընդունում է պատգամավորի կողմից Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի պայմանները խախտելու վերաբերյալ եզրակացություն, ապա այն 24 ժամվա ընթացքում ուղարկում է Ազգային ժողովի նախագահին:

2. Էթիկայի հանձնաժողովի եզրակացությունն առանց քվեարկության ընդգրկվում է Ազգային ժողովի հերթական նստաշրջանի և առաջիկա չորսօրյա նիստերի օրակարգերում և քննարկվում է արտահերթ:

3. Էթիկայի հանձնաժողովի եզրակացությունում նշված պատգամավորն առնվազն 7 օր առաջ գրավոր տեղեկացվում է Ազգային ժողովի նիստում եզրակացության քննարկման մասին: Պատգամավորի բացակայության դեպքում հարցի քննարկումը հետաձգվում է երկու անգամ՝ երկուական շաբաթով, որից հետո այն քննարկվում է հաջորդ չորսօրյա նիստում՝ անկախ նրա ներկայությունից:

4. Էթիկայի հանձնաժողովի եզրակացությունն Ազգային ժողովում քննարկվում է սույն օրենքի 55-րդ հոդվածով սահմանված կարգով: Որպես հիմնական զեկուցող հանդես է գալիս Էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու իրավասություն ունեցող հանձնաժողովի անդամը, իսկ որպես հարակից զեկուցող կարող է հանդես գալ

եզրակացությունում նշված պատգամավորը կամ նրա լիազորած այլ պատգամավորը:

5. Հարցի քննարկման ավարտին քվեարկության է դրվում պատգամավորի կողմից Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի պայմանները խախտելու վերաբերյալ Էթիկայի հանձնաժողովի եզրակացությանը հավանություն տալու մասին հարցը, որի վերաբերյալ Ազգային ժողովի որոշումն ընդունվում է գաղտնի քվեարկությամբ, քվեարկությանը մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին:

6. Եթե քվեարկության արդյունքում սույն հոդվածի 5-րդ կետում նշված Ազգային ժողովի որոշումը չի ստանում ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա համարվում է, որ պատգամավորը չի խախտել Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի պայմանները:

7. Եթե քվեարկության արդյունքում սույն հոդվածի 5-րդ կետում նշված Ազգային ժողովի որոշումը ստանում է ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա այդ որոշման և Էթիկայի հանձնաժողովի եզրակացության հիման վրա կազմվում է պատգամավորի լիազորությունների դադարման մասին արձանագրություն, որն ստորագրում է Ազգային ժողովի նախագահը և հնգօրյա ժամկետում ուղարկում Կենտրոնական ընտրական հանձնաժողով:»:

Հոդված 31. *Օրենքի 100-րդ հոդվածի 5-րդ մասում «, բյուջեպային և փոփոխական հարցերի» բառերը փոխարինել «և բյուջեպային ոլորտի» բառերով:*

Հոդված 32. Օրենքի 101-րդ հոդվածի 3-րդ մասում «, բյուջեպային և տնտեսական հարցերի» բառերը փոխարինել «և բյուջեպային ոլորտի» բառերով:

Հոդված 33. Օրենքի 102-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում «, բյուջեպային և տնտեսական հարցերի» բառերը փոխարինել «և բյուջեպային ոլորտի» բառերով:

Հոդված 34. Օրենքի 103-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետում «հարցերի» բառը փոխարինել «ոլորտի» բառով:

Հոդված 35. Օրենքը 105.1-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 105.2-րդ հոդվածով՝

«Հոդված 105.2. Կառավարության որոշմամբ անհետաձգել համարվող օրենքների նախագծերը

1. Եթե Կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագիծը կամ նախագծերի փաթեթը ներկայացվել է առաջիկա չորսօրյա նիստերից առնվազն 5 օր առաջ, ապա՝

ա) Աշխատակազմը սույն օրենքի 51-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով նախատեսված իր եզրակացությունը ներկայացնում է ոչ ուշ, քան առաջիկա չորսօրյա նիստերից 2 օր առաջ,

բ) գլխադասային հանձնաժողովը սույն օրենքի 51-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված իր եզրակացությունը ներկայացնում է ոչ ուշ, քան առաջիկա չորսօրյա նիստերից 2 ժամ առաջ,

գ) նախագիծը կամ նախագծերի փաթեթն առանց քվերակության ընդգրկվում է Ազգային ժողովի հերթական նստաշրջանի և առաջիկա չորսօրյա նիստերի օրակարգում և առաջին ընթերցմամբ քննարկվում և քվեարկվում է այդ չորսօրյա նիստերի ընթացքում:

2. Եթե Կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագիծը կամ նախագծերի փաթեթը ներկայացվել է առաջիկա չորսօրյա նիստերից մինչև 4 օր առաջ, ապա՝

ա) Աշխատակազմը սույն օրենքի 51-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով նախատեսված իր եզրակացությունը ներկայացնում է 14-օրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան առաջիկա չորսօրյա նիստերին հաջորդող չորսօրյա նիստերից 2 օր առաջ,

բ) գլխադասային հանձնաժողովը սույն օրենքի 51-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված իր եզրակացությունը ներկայացնում է 20-օրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան առաջիկա չորսօրյա նիստերին հաջորդող չորսօրյա նիստերից 2 ժամ առաջ,

գ) նախագիծը կամ նախագծերի փաթեթն առանց քվերակության ընդգրկում է Ազգային ժողովի հերթական նստաշրջանի և առաջիկա չորսօրյա նիստերին հաջորդող չորսօրյա նիստերի օրակարգում և առաջին ընթերցմամբ քննարկվում և քվեարկվում է այդ չորսօրյա նիստերի ընթացքում:

3. Կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծի կամ նախագծերի փաթեթի վերաբերյալ իր եզրակացությունը գլխադասային հանձնաժողովը կարող է ներկայացնել նաև մինչև սույն օրենքի 51-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով, սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով կամ սույն հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված Աշխատակազմի եզրակացությունը ստանալը կամ դրա ստացման ժամկետը սպառվելը:

4. Սույն օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքում Կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող՝ առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծի կամ նախագծերի փաթեթի վերաբերյալ

առաջարկություններն Աշխատակազմ են ներկայացվում օրենքի նախագիծը կամ նախագծերի փաթեթը ստանալուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

5. Կառավարությունն իր որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագիծը կամ նախագծերի փաթեթը սույն օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դեպքում գլխադասային հանձնաժողով է ներկայացնում առաջարկությունների ներկայացման համար սույն հոդվածի 4-րդ կետով սահմանված ժամկետն սպառվելուց հետո՝ 7 օրվա ընթացքում, իսկ գլխադասային հանձնաժողովն իր եզրակացությունը, ինչպես նաև օրենքի նախագծի կամ նախագծերի փաթեթի և ամփոփաթերթիկի վերջնական տարբերակն Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում Կառավարության կողմից ներկայացված փաստաթղթերն ստանալուց հետո՝ 3-օրվա ընթացքում, *սակայն ոչ ուշ, քան առաջիկա չորսօրյա նիստերից 2 ժամ առաջ, եթե Ազգային ժողովի որոշմամբ այլ բան նախատեսված չէ:*

6. Եթե Կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագիծը կամ նախագծերի փաթեթն Ազգային ժողովում քննարկվում է երեք ընթերցմամբ, ապա սույն օրենքի 71-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված կարգով երրորդ ընթերցման է ներկայացվում երկրորդ ընթերցմամբ ընդունվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

7. Կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագիծը կամ նախագծերի փաթեթն երկրորդ կամ երրորդ ընթերցմամբ քննակվելու նպատակով առաջիկա չորսօրյա նիստերի օրակարգում ընդգրկվում է առանց քվեարկության և համապատասխան ընթերցմամբ քննարկվում և քվեարկվում է այդ չորսօրյա նիստերի ընթացքում:

8. Կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագիծը կամ նախագծերի փաթեթը չի համարվում անհետաձգելի, եթե՝

ա) Ազգային ժողովի նիստում օրենքի նախագծի կամ նախագծերի փաթեթի քննարկման ժամանակ հիմնական զեկուցողը բացակայում է և նրա փոխարեն հիմնական զեկուցմամբ հանդես չի գալիս Կառավարության այլ լիազոր ներկայացուցիչ.

բ) Կառավարությունը սույն հոդվածի 5-րդ կետով սահմանված ժամկետում համապատասխան փաստաթղթերը գլխադասային հանձնաժողով չի ներկայացնում.

գ) սույն հոդվածի 6-րդ կետով սահմանված ժամկետում օրենքի նախագիծը կամ նախագծերի փաթեթը երրորդ ընթերցման չի ներկայացվում.

դ) Կառավարության առաջարկությամբ և Ազգային ժողովի որոշմամբ օրենքի նախագծի կամ նախագծերի փաթեթի քննարկման կամ սույն հոդվածով նախատեսված ժամկետները երկարաձգվում են Սահմանադրության 74.1-րդ հոդվածի «ա» կետով նախատեսված ժամկետը գերազանցող ժամկետով:

9. Սահմանադրության 74.1-րդ հոդվածի «ա» կետով նախատեսված ժամկետը չի համարվում սպառված, եթե Կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագծի կամ նախագծերի փաթեթի վերաբերյալ Ազգային ժողովը որոշում է կայացնում՝ մերժում է ընդունել առաջին ընթերցմամբ, երկրորդ կամ երրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ կամ ընդունում է որպես օրենք, շրջանառության մեջ դրվելուց հետո՝

ա) հերթական նստաշրջանի երեք ամսվա ընթացքում, եթե այդ նստաշրջանի ավարտին մնացել է ոչ պակաս, քան երեք ամիս.

բ) միմյանց հաջորդող երկու հերթական նստաշրջանների երեք ամսվա ընթացքում, եթե առաջին նստաշրջանի ավարտին մնացել է երեք ամսից պակաս:

10. Հանրապետության Նախագահին Ազգային ժողովի նախագահի կամ վարչապետի առաջարկությամբ կարող է Սահմանադրության 74.1-րդ հոդվածի «ա» կետով նախատեսված հիմքով արձակել Ազգային ժողովը սույն հոդվածի 9-րդ կետի «ա» կամ «բ» ենթակետերով նախատեսված ժամկետը լրանալուց հետո՝ 6 ամսվա ընթացքում, բացառությամբ այն դեպքի, երբ այդ ժամանակահատվածում Ազգային ժողովն ընդունում է Կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագիծը կամ նախագծերի փաթեթը:

11. Եթե սույն հոդվածի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված ժամկետները լրանում են մինչև չորսօրյա նիստերի երկուշաբթի օրը, ապա այդ ժամկետները համարվում են սպառված առաջիկա չորսօրյա նիստերի առաջին նիստից 2 ժամ առաջ:»:

Հոդված 36. *Օրենքի 109-րդ հոդվածի 4-րդ մասի «բ» կետում «հարցերի» բառը փոխարինել «ոլորտի» բառով:*

Հոդված 37. *Օրենքի 113-րդ հոդվածի 4-րդ մասը «հարաբերությունների» բառից հետո լրացնել «ոլորտի» բառով:*

Հոդված 38. *Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը:*

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈԹՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N	Առաջարկության հեղինակը ¹	Հոդվածը, կետը ենթակետը	Առաջարկությունը	Հեղինակների եզրակացությունը
	«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈԹՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ			
1	Պատգամավորներ Վ.Հովհաննեսյան Ա.Մինասյան Ա.Շահբազյան	2-րդ հոդվածի 3-րդ մաս	ա.1) մասում «նախատեսված դեպքի» բառերից հետո ավելացնել «, ինչպես նաև այն դեպքում, երբ նա ընդգրկված է էթիկայի հանձնաժողովի կազմում» բառերը:	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ էթիկայի հանձնաժողովը ժամանակավոր հանձնաժողով է և դրա կազմում ընդգրկվելը չի կարող հիմք հանդիսանալ մշտական հանձնաժողովի կազմում չընդգրկվելու համար:
2	Հեղինակներ	2-րդ հոդվածի 5-րդ մաս	«ա.1» բառը փոխարինել «ա.2» բառով:	Առաջարկությունն ընդունվել է:
3	Պատգամավորներ Վ.Հովհաննեսյան Ա.Մինասյան Ա.Շահբազյան			
4	Պատգամավորներ Վ.Հովհաննեսյան Ա.Մինասյան Ա.Շահբազյան	Նոր հոդված	«Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել նոր մասով հետևյալ բովանդակությամբ. «Արգելվում է պատգամավորի փոխարեն այլ անձի, այդ թվում՝ այլ պատգամավորի,	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պատգամավորը քվեարկում է

¹ Ամփոփաթեթում հեղինակների կողմից ներկայացված մի շարք առաջարկություններ կատարվել են հանձնաժողովի և Ազգային ժողովի նիստում հարցի քննարկումների ընթացքում՝ այլ պատգամավորների (մասնավորապես՝ պատգամավորներ Գ.Մինասյանի և Կ.Նահապետյանի) կողմից:

			կողմից քվեարկելը: Պատգամավորի փոխարեն այլ անձի կողմից քվեարկելը կամ պատգամավորների քվեարկության արդյունքները կեղծելը պատժվում է օրենքով:»:	անձամբ, իսկ կարգազանց պատգամավորների նկատմամբ նիստը վարողը կարող է ձեռնարկել նույն օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կարգապահական միջոցները:
5	Պատգամավոր Կ.Նահապետյան	3-րդ հոդված (6.1-րդ հոդվածի 2-րդ մաս «գ» ենթակետ)	«հանձնաժողովների նիստերի» բառերը փոխարինել «հանձնաժողովների, ենթահանձնաժողովների, աշխատանքային խմբերի նիստերի և խորհրդարանական լսումների» բառերով:	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ ենթահանձնաժողովների, աշխատանքային խմբերի նիստերի, խորհրդարանական լսումների, ինչպես նաև պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների այլ նիստերի անցկացման կարգի պահպանման պահանջը մասնավորապես ապահովվում է 6.1-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով (հարգել օրենքը և ենթարկվել օրենքին):
6	Հեղինակներ	3-րդ հոդվածում (6.2-րդ հոդվածի 1-ին մաս)	«ներկայացնելը, » բառից հետո լրացնել « Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված հարցի վերաբերյալ առաջարկություն ներկայացնելը,» բառերով:	+
	Պատգամավոր Կ.Նահապետյան		ա) «ենթահանձնաժողովների» բառից հետո լրացնել «աշխատանքային խմբերի» բառերը. բ) «ունենալը» բառից հետո լրացնել «խորհրդարանական լսումներին» բառերը:	Առաջարկությունը չի ընդունվել:
7	Հեղինակներ	3-րդ հոդվածում (6.2-րդ հոդվածի 2-րդ մաս)	«հոդվածի» բառից հետո լրացնել «1-ին մասի 16-րդ կետի» բառերով:	+

8	Հեղինակներ	3-րդ հոդվածում (6.2-րդ հոդվածի 3-րդ մաս)	«Շահերի» բառը փոխարինել «Ազգային ժողովի նիստում շահերի» բառերով:	+
9	Հեղինակներ	3-րդ հոդվածում (6.2-րդ հոդվածի 4-րդ մաս)	«Ազգային ժողովի նիստում ելույթ է ունենում» բառերը փոխարինել «հանդես է գալիս» բառերով:	+
10	Հեղինակներ	3-րդ հոդվածում (6.2-րդ հոդվածի 4-րդ մաս)	«բ» կետը հանել և փոխել հաջորդող կետերի համարակալումը:	+
11	Հեղինակներ	4-րդ հոդված	Հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 3-րդ մասով. «3) 9-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:»:	+
12	Հեղինակներ	6-րդ հոդված (9.2-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետ)	«դրանում» բառը փոխարինել «դրա կանոնադրական կապիտալում» բառերով:	+
13	Պատգամավորներ Վ.Հովհաննեսյան Ա.Մինասյան Ա.Շահբազյան		Կետը վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ. «բ) օտարել կամ հավատարմագրային կառավարման հանձնել առևտրային կազակամերայությունում իր մասնակցությունը՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված պահանջներին համապատասխան»:	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ պատգամավորի (նաև հանրային ծառայողների) գործունեության սահմանափակումները տարածվում են միայն փաստացիորեն տնօրինվող («չօտարված») բաժնեմասի վրա:
14	Պատգամավոր Կ.Նահապետյան	6-րդ հոդված (9.2-րդ հոդվածի 3-րդ մաս)	«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում նույնաբովանդակ դրույթների կրկնությունը բացառելու նպատակով Նախագծի 6-րդ հոդվածով լրացվող 9.2-րդ հոդվածի 3-րդ կետը հանել, քանի որ դրանով նախատեսված իրավունքն ամրագրված է Նախագծի 10-րդ հոդվածով լրացվող 24.3-րդ հոդվածի 1-ին կետի բ) ենթակետում:	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ 9.2-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է՝ մինչև վճարովի հիմունքներով գիտական, մանկավարժական կամ ստեղծագործական աշխատանքի անցնելը էթիկայի հանձնաժողովին դիմելու պատգամովրի իրավունքը, իսկ 24.3-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված են «Ազգային ժողովի

				կանոնակարգ» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում էթիկայի հանձնաժողովին դիմում ներկայացնելու իրավունք ունեցող անձինք:
15	Հեղինակներ	6 -րդ հոդված (9.2-րդ հոդվածի 4-րդ մաս)	«կազմակերպությունում» բառը փոխարինել «կազմակերպության կանոնադրական կապիտալում» բառերով, իսկ «դրանում» բառը՝ «դրա կանոնադրական կապիտալում» բառերով:	+
16	Պատգամավոր Կ.Նահապետյան	7-րդ հոդված	«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում նույնաբովանդակ դրույթների կրկնությունը բացառելու նպատակով Նախագծի 7-րդ հոդվածով լրացվող գ.1) ենթակետը հանել, քանի որ դրանով նախատեսված դրույթն արդեն իսկ ամրագրված է գործող «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում՝ 12-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետում՝ համաձայն որի պատգամավորի լիազորությունները դադարում են, եթե նա խախտել է Սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի պահանջը, մասնավորապես, զբաղեցրել է պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում: Համապատասխանաբար, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում անհրաժեշտ չի լինի «գ» բառը	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ «գ.1» ենթակետով ապահովվում է պատգամավորի լիազորությունների դադարումն առանց էթիկայի հանձնաժողովի եզրակացության՝ այն դեպքերում, երբ պատգամավորը պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնում կամ առևտրային կազմակերպությունում նշանակվել է (ընտրվել է) պաշտոնում:

			փոխարինել «գ.1» բառով:	
17	Հեղինակներ	7-րդ հոդված 4-րդ մաս	«գ.1» բառից հետո լրացնել «բառով» բառով:	+
18	Հեղինակներ	8-րդ հոդված	Երկրորդ «կազմը» բառը հանել:	Առաջարկությունն ընդունվել է:
19	Պատգամավորներ Վ.Հովհաննեսյան Ա.Մինասյան Ա.Շահբազյան			
20		Նոր՝ 9-րդ հոդված	Նախագիծը լրացնել նոր՝ 9-րդ հոդվածով:	+
21	Պատգամավոր Կ.Նահապետյան	10-րդ հոդված (24.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերություն)	Նախագծով նախատեսվում է, որ Էթիկայի հանձնաժողովը կազմավորվելու է Ազգային ժողովի առաջին նստաշրջանում, ինչպես նաև յուրաքանչյուր հերթական նստաշրջանի առաջին չորսօրյա նիստում: Էթիկայի հանձնաժողովում գործունեության հստակ չափորոշիչների և կայուն պրակտիկայի ձևավորման վրա կարող է բացասաբար անդրադառնալ դրա՝ հերթական նստաշրջանից նստաշրջան կազմավորումը: Էթիկայի հանձնաժողովի բնականոն գործունեությունը, աշխատանքի արդյունավետությունը, հանձնաժողովում ձևավորված չափորոշիչների և պրակտիկայի միասնականությունն ապահովելու նպատակով առաջարկում եմ Նախագծի 10-րդ հոդվածով լրացվող 24.1-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Էթիկայի հանձնաժողովը կազմավորվում է խմբակցությունների ներկայացմամբ	Առաջարկությունը չի ընդունվել:

			Ազգային ժողովի առաջին նստաշրջանում և գործում է մեկ տարի ժակետով մինչև նույն գումարման Ազգային ժողովի հաջորդ էթիկայի հանձնաժողովի կազմավորումը հերթական նստաշրջանի առաջին չորսօրյա նիստի ժամանակահատվածում:»:	
22	Պատգամավորներ Վ.Հովհաննեսյան Ա.Մինասյան Ա.Շահբազյան	10-րդ հոդված (24.1-րդ հոդվածի 3-րդ մաս)	Երկրորդ պարբերությունից հանել «ամենամեծաթիվ» բառը, իսկ վերջում ավելացնել՝ «` ըստ հաջորդականության մեծաթվից փոքրաթիվ» բառերը: Նույն մասի ա) և բ) մասերից հանել «ամենամեծաթիվ» բառը:	Առաջարկությունը չի ընդունվել:
23	Հեղինակներ	10-րդ հոդված (24.2-րդ հոդվածի 2-րդ մաս)	«պետական կազմակերպությունից» բառերը փոխարինել «պետական կամ համայնքային կազմակերպությունից» բառերով:	+
24	Պատգամավոր Կ.Նահապետյան	10-րդ հոդված (24.3-րդ հոդվածի վերնագրում)	«դիմելը» բառից հետո լրացնել «և հանձնաժողովում հարցերի քննության կարգը» բառերը:	Առաջարկությունն ընդունվել է մասամբ: Վերնագիրը «դիմել» բառից հետո լրացվել է «և դիմումի քննարկումը» բառերով, քանի որ 24.4-րդ հոդվածում նույնպես սահմանված են հանձնաժողովում հարցերի քննության կարգին առնչվող դրույթներ:
25	Հեղինակներ	10-րդ հոդված (24.3-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետ)	Առաջին «ստորագրություն» և «և իրավաբանական անձի կնիքը» բառերը հանել:	+

26	Հեղինակներ	10-րդ հոդված (24.3-րդ հոդվածի 5-րդ մասի «գ» կետ)	«սույն օրենքի 24.2-րդ հոդվածի 1-ին կետի «ա»-ից «գ» ենթակետերում նշված հարցով» բառերը հանել, իսկ «որոշում» բառը փոխարինել «որոշում (եզրակացություն)» բառերով:	+
27	Պատգամավոր Կ.Նահապետյան	10-րդ հոդված (24.3-րդ հոդվածի 8-րդ մասի «բ» ենթակետ)	«հանցակազմի» բառը փոխարինել «հանցագործության» բառով: Նույն փոփոխությունը կատարել նաև «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 4- րդ մասում:	Առաջարկությունն ընդունվել է:
28	Պատգամավոր Կ.Նահապետյան	10-րդ հոդված (24.4-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետ)	«այն պատգամավորին, որին վերաբերվում է դիմումը» բառերը փոխարինել «պատգամավորին, որին վերաբերում է դիմումը, կամ նրա ներկայացուցչին» բառերով, ինչը հնարավորություն կընձեռի պատգամավորին առավել արդյունավետ ներկայացնելու և պաշտպանելու իր շահերը:	Առաջարկությունն ընդունվել է մասամբ: 24.4-րդ հոդվածի 1-ին մասի «դ» և «ե» կետերը «ամփինք» բառից հետո լրացվել են «, ինչպես նաև պատգամավորի ներկայացուցիչը» բառերով:
29	Հեղինակներ	10-րդ հոդված (24.4-րդ հոդվածի 4-րդ մաս)	«22-րդ հոդվածը» բառերը փոխարինել «հոդվածի 2-ից 5-րդ կետերը» բառերով, իսկ «չի» բառը՝ «չեն» բառով:	+
30	Հեղինակներ	11-րդ հոդված նոր՝ 1-ին մաս	Հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 1-ին մասով. «1) 1-ին մասում «1/12-ին» բառը փոխարինել «1/ՄՀ-ին, որտեղ ՄՀ-ն մշտական հանձնաժողովների ընդհանուր թիվն է» բառերով.»,»:	+
31	Հեղինակներ	Նոր՝ 12-րդ հոդված	Նախագիծը լրացնել նոր՝ 12-րդ հոդվածով:	+
32	Հեղինակներ	13-րդ հոդված 2-րդ մաս	«բ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «բ) հետաձգման ժամկետը լրանալու օրվան	+

			հաջորդող օրը դուրս է գալիս Ազգային ժողովում շրջանառությունից, եթե մինչև հետաձգման ժամկետը լրանալու օրը հեղինակը գրավոր չի դիմում գլխադասային հանձնաժողով:»:	
33	Հեղինակներ	14-րդ հոդված նոր՝ 1-ին մաս	Հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1-ին մասով. «1) 6-րդ մասը «գ» կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ.1» կետով «գ.1) Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների թվի, անվանումների և գործունեության ոլորտների հաստատում:»:	+
34	Հեղինակներ	14-րդ հոդված 2-րդ մաս	«կետը հանել» բառերը փոխարինել «կետն ուժը կորցրած ճանաչել» բառերով:	+
35	Պատգամավոր Կ.Նահապետյան	15-րդ հոդված Նոր մաս	Նախագծի 31-րդ հոդվածով լրացվող 99 ¹ -րդ հոդվածի 2-րդ մաս հիման վրա «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը ժգ) ենթակետից հետո լրացնել նոր՝ ժդ) ենթակետով հետևյալ խմբագրությամբ. «ժդ) սահմանադրության 65-րդ հոդվածի առաջին մասի պայմանները խախտելու վերաբերյալ էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը:»:	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի (Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված քննարկման ժամկետ ունեցող հարցերը) և նախագծով լրացվող 99.1-րդ հոդվածի 2-րդ մասի (էթիկայի հանձնաժողովի եզրակացությունն առանց քվեարկության ընդգրկվում է Ազգային ժողովի հերթական նստաշրջանի և առաջիկա չորսօրյա նիստերի օրակարգերում և քննարկվում է արտահերթ) ուժով էթիկայի հանձնաժողովի եզրակացություններն Ազգային ժողովի հերթական նստաշրջանի և առաջիկա չորսօրյա նիստերի օրակարգերում ընդգրկվում են

				պարտադիր կարգով՝ առանց քվեարկության:
36	Հեղինակներ	18-րդ հոդված (52.1 հոդվածի 3-րդ մաս)	«(«ԱՄ»՝ առողջապահության, մայրության և մանկության հարցերի մշտական հանձնաժողով, «ԱՀ»՝ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողով, «ԳԿ»՝ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողով, «ԳԲ»՝ գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողով, «ԵԻ»՝ եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողով, «ՄԻ»՝ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողով, «ՊԱ»՝ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողով, «ՊԻ»՝ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողով, «ՍՀ»՝ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով, «ՏՏ»՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողով, «ՏՀ»՝ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով, «ՖՎ»՝ Ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողով, «----»՝ Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողովի անվանման հապավումը)» բառերը հանել:	+
37	Հեղինակներ	18-րդ հոդված (52.1 հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ մասեր)	«ռեեստր» բառը փոխարինել «Ռեեստր» բառով:	+
38	Հեղինակներ	Նոր՝ 19-րդ, 22-ից 28-րդ և 32-ից 35-	Նախագիծը լրացնել նոր՝ 19-րդ, 22-ից 28-րդ և 32-ից 35-րդ հոդվածներով:	+

		րդ հոդվածներ		
39	Հեղինակներ	36-րդ հոդված (105.2-րդ հոդվածի 1-ին մաս)	Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1. Եթե Կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագիծը կամ նախագծերի փաթեթը ներկայացվել է առաջիկա չորսօրյա նիստերից առնվազն 12 օր առաջ, ապա՝ ա) Աշխատակազմը սույն օրենքի 51-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով նախատեսված իր եզրակացությունը ներկայացնում է 7-օրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան առաջիկա չորսօրյա նիստերից 2 օր առաջ, բ) գլխադասային հանձնաժողովը սույն օրենքի 51-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված իր եզրակացությունը ներկայացնում է 10-օրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան առաջիկա չորսօրյա նիստերից 2 ժամ առաջ, գ) նախագիծը կամ նախագծերի փաթեթն առանց քվերակության ընդգրկվում է Ազգային ժողովի հերթական նստաշրջանի և առաջիկա չորսօրյա նիստերի օրակարգում և առաջին ընթերցմամբ քննարկվում և քվեարկվում է այդ չորսօրյա նիստերի ընթացքում:	+
40	Հեղինակներ	36-րդ հոդված (105.2-րդ հոդվածի 2-րդ	Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ Եթե Կառավարության որոշմամբ	+

		մաս)	անհետաձգելի համարվող օրենքի նախագիծը կամ նախագծերի փաթեթը ներկայացվել է առաջիկա չորսօրյա նիստերից մինչև 11 օր առաջ, ապա՝ ա) Աշխատակազմը սույն օրենքի 51-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով նախատեսված իր եզրակացությունը ներկայացնում է 14-օրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան առաջիկա չորսօրյա նիստերին հաջորդող չորսօրյա նիստերից 2 օր առաջ, բ) գլխադասային հանձնաժողովը սույն օրենքի 51-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված իր եզրակացությունը ներկայացնում է 20-օրյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան առաջիկա չորսօրյա նիստերին հաջորդող չորսօրյա նիստերից 2 ժամ առաջ, գ) նախագիծը կամ նախագծերի փաթեթն առանց քվերակության ընդգրկում է Ազգային ժողովի հերթական նստաշրջանի և առաջիկա չորսօրյա նիստերին հաջորդող չորսօրյա նիստերի օրակարգում և առաջին ընթերցմամբ քննարկվում և քվերակվում է այդ չորսօրյա նիստերի ընթացքում:»:	
41	Հեղինակներ	36-րդ հոդված (105.2-րդ հոդված նոր՝ 3-րդ մաս)	Հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ մասով. «3 Կառավարության որոշմամբ	+

			անհետաձգելի համարվող օրենքի նախագծի կամ նախագծերի փաթեթի վերաբերյալ իր եզրակացությունը գլխադասային հանձնաժողովը կարող է ներկայացնել նաև մինչև սույն օրենքի 51-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով, սույն հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով կամ սույն հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված Աշխատակազմի եզրակացությունը ստանալը կամ դրա ստացման ժամկետը սպառվելը:»:	
42	Հեղինակներ	36-րդ հոդված (105.2-րդ հոդվածի 5-րդ մաս)	Վերջին «ընթացքում» բառից հետո լրացնել «, սակայն ոչ ուշ, քան առաջիկա չորսօրյա նիստերից 2 ժամ առաջ» բառերով:	+
43	Հեղինակներ	Նոր՝ 37-րդ և 38-րդ հոդվածներ:	Նախագիծը լրացնել նոր՝ 37-րդ և 38-րդ հոդվածներով:	+
44	Հեղինակներ	39-րդ հոդված	Հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 39. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը, բացառությամբ սույն օրենքի 5-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2013 թվական հունվարի 1-ից:»:	+
	«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ			

45	Պատգամավոր Կ.Նահապետյան	Նոր մաս	Նախագծի 6-րդ հոդվածով լրացվող 9.2-րդ հոդվածին համապատասխան՝ հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի գործունեության սահմանափակումների ապահովումը երաշխավորող դրույթներ նախատեսել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում:	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:
46	Հեղինակներ	2-րդ հոդված 1-ին մաս	Մասը հանել:	+
47	Հեղինակներ	2-րդ հոդվածի 2-րդ մաս (նոր՝ 1-ին մաս)	Մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1)2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «2. Առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում բաժնեմաս ունենալու դեպքում հանրային ծառայողները և բարձրաստիճան պաշտոնատար անձինք պարտավոր են պաշտոնի նշանակվելուց (ընտրվելուց) հետո՝ մեկ ամսվա ընթացքում, այն օրենքով սահմանված կարգով հանձնել հավատարմագրային կառավարման: Հանրային ծառայողները և բարձրաստիճան պաշտոնատար անձինք իրավունք ունեն հավատարմագրային կառավարման հանձնված գույքից ստանալու եկամուտ:»:	+
48	Պատգամավորներ Վ.Հովհաննեսյան Ա.Սինասյան Ա.Շահբազյան	2-րդ հոդվածի 2-րդ մաս	2-րդ մասի «10 և ավելի տոկոս բաժնեմաս ունանալու դեպքում այն հանձնել հավատարմանագրային կառավարման» բառերը փոխարինել «բաժնեմաս ունանալու դեպքում այն օտարել կամ հանձնել	Առաջարկությունը չի ընդունվել, քանի որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով սահմանված գույքի հայտարարագրի ներկայացումը և նույն օրենքի 37-րդ

			հավատարմագրային կառավարման՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով սույն օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված էթիկայի հանձնաժողովին: Բարձրաստիճան պաշտոնատար անձի դեպքում, սույն մասով նախատեսված գրավոր տեղեկացումը զետեղվում է և ենթակա է հրապարակման սույն օրենքի 37-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:»:	հոդվածի համաձայն այն ռեեստրում զետեղումն ապահովում է հանրային ծառայողի կամ բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ առևտրային կազմակերպություններում ունեցած մասնակցության վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը:
49	Հեղինակներ	2-րդ հոդված նոր՝ 3-րդ մաս)	Հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 3-րդ մասով. «3) 3-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով՝ «4. Առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում հանրային ծառայողի կամ բարձրաստիճան պաշտոնատար անձի ունեցած բաժնեմասի հավատարմագրային կառավարիչ կարող է լինել նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող քաղաքացին կամ ոչ առևտրային կազմակերպությունը:»:	+
50	Հեղինակներ	Նոր՝ 3-րդ հոդված	Նախագիծը լրացնել նոր՝ 3-րդ հոդվածով:	+
51	Պատգամավոր Կ.Նահապետյան		Նախագծի 6-րդ հոդվածով լրացվող 9.1-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված դրույթներին համապատասխան՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածը	Առաջարկությունն ընդունվել է:

			լրացնել նոր՝ 7-րդ և 8-րդ մասերով հետևյալ խմբագրությամբ. «7. Հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ իրենց լիազորությունների իրականացման հետ կապված պարտականությունները գերակա են իրենց կողմից կատարվող գիտական, մանկավարժական, ստեղծագործական աշխատանքի կամ օրենքով չարգելված այլ աշխատանքային գործունեության նկատմամբ: 8. Հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի կատարած գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքի համար վարձատրությունը չի կարող գերազանցել ողջամիտ չափը, այսինքն՝ այն չափը, որին նույնպիսի աշխատանքի կատարման համար համանման որակներ ունեցող, բայց հանրային ծառայող կամ բարձրաստիճան պաշտոնատար անձ չհանդիսացող անձը կարող էր հավակնել:»:	
	Պատգամավոր Կ.Նահապետյան	Նոր՝ 5-րդ հոդված	Օրենքը լրացնել նոր՝ 5-րդ հոդվածով:	Առաջարկությունն ընդունվել է:
52	Հեղինակներ	6-րդ հոդված	Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի, որն	+

			ուժի մեջ է մտնում Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը:»:	
	«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ			
53	Հեղինակներ	2-րդ հոդված	Հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Ազգային ժողովի հաջորդ գումարման առաջին նստաշրջանի բացման օրը:»	+
	ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹՈՒՄ ԱՎԵԼԱՑՎԱԾ ՆՈՐ ՆԱԽԱԳԾԵՐ			
54	Հեղինակներ	Նախագծերի փաթեթ	Նախագծերի փաթեթը լրացնել հետևյալ ՀՀ օրենքների նախագծերով` 1) «Մաքսային ծառայության մասին» հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», 2) «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», 3) «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», 4) «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», 5) «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության	+

			մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», 6) «Դիվանագիտական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», 7) «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», 8) «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», 9) «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», 10) «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», 11) «Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», 12) «Դատական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», 13) «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»:	
--	--	--	---	--

